«ԱՄԵՐԻԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

MA: American Studies, International Relations

Երևանի պետական համալսարանի Ամերիկյան հետազոտությունների կենտրոնը ուրախ է տեղեկացնելու 2021-22 ուստարում Միջազգային հարաբերություններ մասնագիտությամբ «Ամերիկագիտություն» մագիստրոսական կրթական ծրագրի մեկնարկի մասին: Կրթական ծրագիրը մշակվել և ներդրվել է ԵՊՀ երկարամյա գործընկեր Արիզոնայի պետական համալսարանի հետ համագործակցության շրջանակում և ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան ֆինանսական օժանդակությամբ:

Մագիստրոսական կրթական ծրագրի գերակա նպատակներից է պատրաստել ապագա մասնագետ-շրջանավարտներ, որոնք կկարողանան ձեռք բերված գիտելիքներն ու կարողությունները գործնականում կիրառել ԱՄՆ-ի հետ կապված տարբեր ոլորտներում, որոնց թվում են՝ ամերիկյան քաղաքականությունը և տնտեսության, կորպորատիվ ինստիտուտները, ԱՄՆ կառավարչական համակարգը և հանրային քաղաքականությունը, մշակույթը, աշխարհագրությունը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները: Ծրագրի կարևոր առանձնահատկություններից է հասարակագիտական հետազոտական մեթոդների դասավանդումը և համապատասխան կարողությունների և հմտությունների ձևավորումը:

Կրթական ծրագրի այլ առավելությունների շարքում են՝

- Մասնագիտական կարիերայի հնարավորությունների ստեղծում միջազգային հարաբերությունների բնագավառում, ԱՄՆ-ի հետ կապված կամ ամերիկյան հովհանու ներքո գործող միջազգային կազմակերպություններում, ամերիկյան մշակութային և հասարակական կառույցներում, ինչպես նաև ամերիկյան բիզնեսի և կորպորատիվ ինստիտուտների հետ կապված ոլորտներում,
- Պրակտիկայի հնարավորություններ,
- Կրթաթոշակի շնորհման հնարավորություն՝ ուսման վարձի մի մասի փոխհատուցման նպատակով:

Ամերիկյան հետազոտությունների կենտրոնի կողմից առաջարկվող «Ամերիկագիտություն» կրթական ծրագրի հիմնական դասընթացները կենտրոնանում են հետևյալ ուղղությունների վրա.

- ԱՄՆ արտաքին քաղաքականություն
- Մերձավոր Արևելքում և հարակից տարածքներում ամերիկյան ռազմավարական շահեր
- ԱՄՆ էներգետիկ քաղաքականություն և շրջակա միջավայր
- ԱՄՆ կառավարություն և հանրային քաղաքականություն
- Քաղաքատնտեսություն, բիզնես և ԱՄՆ կորպորացիաներ
- Ամերիկյան հասարակություն, տարածաշրջանային քաղաքականություն և ամերիկահայ սփյուռք
- ԱՄՆ Սահմանադրություն և դատական համակարգ
- ԱՄՆ հանրային և սոցիալական լրատվամիջոցներ և զանգվածային հաղորդակցություն
- Հասարակագիտության հետազոտության մեթոդներ
- Մասնագիտական/ակադեմիական գրագրություն

MA: American Studies, International Relations

American Studies Center at Yerevan State University is pleased to announce the opening of its new M.A. program in American Studies (degree in International Relations) in the 2021-22 academic year. The M.A. program is designed and developed in collaboration with YSU's longstanding institutional partner, Arizona State University, the largest public university in the United States, and funded by a grant from the U.S. Embassy in Armenia.

The newly developed M.A. program offers a rigorous and analytically intensive two-year curriculum in American Studies, International Relations, with majors concentrating in fields of U.S. foreign policy, U.S. international and domestic policies, and American social, economic, political, and public life. One of the special features of the program is its focus on social science research methodology.

Among the benefits that the M.A. program in American Studies offers are:

- Professional career development related to international relations, U.S.-led global organizations, American cultural and social institutions, and the corporate structure and practice of American business.
- Internship opportunities tied to U.S. and other international agencies.
- Competitive scholarship opportunities to cover part of the tuition cost at YSU.

The core M.A. courses offered through the American Studies Center concentrate on:

- U.S. Foreign Policy
- American Strategic Interests in the Middle East and Adjoining Areas
- U.S. Energy Policies and the Environment
- U.S. Government and Public Policy
- Political Economy, Business, and U.S. Corporations
- American Society, Regional Politics, and the Armenian-American Diaspora
- The U.S. Constitution and Judicial System
- Public and Social Media and the Mass Communications in the U.S.
- Social Science Research Methods
- Professional/Academic Writing